



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2233

«ՅԱԴՎԱՀԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ

№ 55

(Զ. ԳՈՐԻՑՈՂԻԿԻ 100-ԱՄԵՐԻԿԻ ԱՌԹԻԿԻ)

# ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ

ԳԻՒՇ Է ՀԱՎԱ.

Կազմեց Յովս. Թաղէռուսանց

— 5 —

ТИФЛИСЪ

Электропечатия „Г Е Р М Е С Ъ“ С. П. Едигарова  
Մագար. փող. № 5. 1907

9(45)  
թ-14

24 JAN 2006

«ՅԱԹԱՀԱՆԻ ԴՐԱՄԱՐԱՆ»

№ 55  
30 MAY 2011

3(45)

70-14

ՀԿ

(Ձ. ԳԱՐԵԲԱԼԴԻՒ 100-ԱՐԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

# ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ

1998

Կազմեց Յովա. Թաղէռսեանը



ТИФЛИСЪ

Электроиздания „Г Е Р М Е С Ъ“ С. Н. Едигарова  
Մուլտ. փոլ. № 5. 1907

(15)

## Ա Զ Գ Ա Յ Ի Ւ Հ Ե Ր Ո Ս Լ

«Մեր հայրենիք թշւառ, անտէր,  
«Մեր թշնամուց ոտնակոխ,  
«Իւր որդիքը արդ կանչում են  
«Հանել իւր վրէժ, քէն ու ոխ»...

## 1.

XIX-դ դարի սկզբում, երբ եւրօպական բոլոր պետութիւնները՝ Խուսաստանը, Անգլիան, Գերմանիան ու Աւստրիան բաժանում էին իրար մէջ Նապոլէօն Մեծից յետոյ մնացած հարուստ ժառանգութիւնը,—իտալիան ազգային ազատ ու անկախ մի պետութիւն չէր, այլ սոսկ մի «աշխարհագրական տէրմին», ինչպէս առողջ Աւստրիայի առաջին մինիստր Մէտտէրնիխը 1815 թ. վիճանայի վեհաժողովում:

Նա բաժանուած էր մի շարք փոքր իշխանութիւնների, որոնք հեծում էին ֆրանսիացիների ու մանաւանդ աւստրիացիների ծանր լծի տակ: Ամեն տեղ տիրում էին հին միապետական կարգեր. Մէտէրնիխի՝ բռնակալութեան արդ պատւարի դառնաշունչ ոգին սաւառնում էր իտալիայի պայծառ հօրիզոններում... Կղերականութիւնն էլ որ միշտ եղել է բազմատանջ իտալիայի «չար հրեշտակը», նորից բարձրացրել էր իր գլուխը ու վերսկսել սոսկալի հալածանք Նապոլէօն առաջինի ժամանակից մտցրած մի քանի րէփօրմների գէմ:

Ժողովուրդը՝ հալուծւած, կեղեքւած օտարից ու իւրայիններից, յուսահատական դրութեան մէջ,—իցուր էր կանչում իր գիտակից որդիներին՝

«Հանել իւր վրէժ, քէն ու ոխ»...

Տանջանքների երկար ու ձիգ տարիներ անցան, մինչև որ



39509-6

«թշնամուց ոտնակոխ» եղած հայրենիքի որդիքը կարողացան դուրս քշել իտալիացից օտարներին, միացնել բոլոր փոքր իշխանութիւններն ու ստեղծել ժամանակակից ազատ ու անկախ իտալիան:

Իտալիայի այդ ազատագրական շարժման պատմութեան հետ սերտ կապւած է Զուգէպաֆէ Գարիբալդիի մեծահռչակ անունը \*):

Խօսել Գարիբալդիի մասին՝ ասել է թէ բաց անել 19-դ դարի պատմութեան ամենափայլուն էջերից մէկը...

\* \*

19-դ դարի սկզբներում իտալիայում միայն մի բուռն հայրենասէրներ էին երազում հեռացնել աւտորացիներին ու ֆրանսիացիներին, միացնել ամբողջ իտալիան ու մտցնել սահմանագրական կարգեր...

Սրանց գործունէութիւնը սկզբներում արտայայտում էր հատ ու կտոր կերպով, տեղական, մասնակի յեղագոխական շարժումներով և միայն երեսուն տարուց յետոյ այդ շարժումը պարզ գունաւորեց, կազմակերպւեց ու ընդհանրացաւ:

1846 թւականն էր. կատարում էր նոր պապի ընտրութիւնը. Հոսմը ընտրողական պայքարի մէջ էր. ամբողջ իտալիան անհամբեր սպասում էր ընտրութեան ելքին:

Կարդինալները բաժանւել էին երկու կուսակցութեան. մէկը պաշտպանում էր եպիսկոպոս Մաստայու (Mastai) թեկնածութիւնը, որը յայտնի էր իրք ազատամիտ հայեացքների տէր մարդ, իրք հակառակորդ Աւստրիայի ու նախանձախնդիր ազգային ազատա-

\*) Գարիբալդին ծնւէլ է հիւսիսային իտալիայի Նիցցա բազարում 1807 լւին յուլիսի 22-ին: Պատանեկութեան օրերում Գարիբալդին նօր հետ, որ ծովագետ էր, կատարում էր յաճախ ծովային ճանապարհորդութիւններ, իսկ նօր մահից յետոյ ինը սկսեց մենակ պարապել ծովային առևտուրով: Բայց երբ հաշակաւոր Մաժինին ձեռնամուխ եղաւ իտալիայի ընդհանուր ապսամբութեան գործին, Գարիբալդին հրաժարւեց ծովային թափառական կեանքից և ամբողջ ողով նուիրեց իտալիայի ազատութեան ծրագրի իրազորման (1831 թ.):

Սակայն ապսամբութիւնը վիժեց և բոլոր մասնակցողները, ի թիւ որոնց և Գարիբալդին, զատապարտեցին մահան պատժի (1833 թ.): Գարիբալդիին յաջողւեց ազատուել հարածանքից ու հեռանալ հարաւային Ամերիկա: Այսանդ նա մեաց մինչև 1848 թ., անընդհատ մասնակցելով հանրապետականների կուսակցիներին միապետականների գէմ:

գրութեան. միւս կուսակցութիւնը պաշտպանում էր Աւստրիայի թեկնածու կարգինալ Լամբրուսկինին:

Երբ ընտրութիւնները վերջացան առաջին թեկնածուի յաղթանակով, որ ընդունեց Պիոս IX անունն, ամբողջ իտալիան խանդավառութեան մօտալուս ազատութեան յօյսերով...

Եւ պայն իր սկզբնական գործունէութեամբ հաւատ ներշնչեց հասարակութեան...

Յենելով Փլանսիական կառավարութեան, Նապոլէօն III-ի աջակցութեան վրայ, Պիոս IX սկսեց մի շարք բարենորոգութեար մտցնել Հոռմի շրջանում: Այսպէս նա ներեց բոլոր «քաղաքական յանցաւորներին», այսինքն նրանց, որոնք իտալիայի ազատագրութեան գործին մասնակցելու համար ենթարկւել էին աքսորի. Հրատարակեց աւելի մեզմ գրաքննական (ցենզուրային) կանոններ, հիմնեց «պետական խորհուրդ» աշխարհականներից և ապա կազմակերպեց ազգային գւարդիա:

Պապի ազատամիտ բարեփոխութեարը համոզեցին հայրենասէր իտալացիներին, որ պապը իրօք կանցնի ազգային ազատագրական շարժման գլուխը, և այդպիսով բազմաչարչար իտալիան կազմատի աւստրիական ամօթարեր լծից...

Ժողովրդի այս խանդավառ յոյսերը բաժանում էր նոյն իսկ յեղափոխութեան պարագլուխ հոչակաւոր Մաձինին. սա մի առանձին գրութեամբ գիմեց Պիոս IX-ին, խորհուրդ տալով առաջնորդ հանդիսանալ հայրենիքի ազատութեան գործում...

Ահա այս պատմական նշանաւոր մօմէնտին հանդէս եկաւ և Գարիբալդին:

Ամբողջ 11 տարի էր, ինչ Գարիբալդին հեռացել էր հայրենիքից և ապրում էր Հարաւային Ամերիկայում:

Այստեղ հանրապետականները կատաղի կոիւ էին մղում միապետականների գէմ: Գարիբալդին անցել էր հանրապետականների գլուխը և անընդհատ կունսեր էր մղում նրանց թշնամինը:

Եւ նա շնորհիւ իր արտասովոր քաջութեան, իր պատերազմական տաղանդին արդէն վաստակել էր, իրք կուող, զինուրական հանձարի միծ հոչակ, իսկ իրք մարդ, շնորհիւ իր հեղ, անսահման բարի ու անձնազն ընաւորութեան, գրաւել էր ամենքի սէրն ու յարգանքը:

Անա հէնց այդ միջոցին Գարիբալդին լուր տուր Պիոս Խ-ի  
ընտրութեան ու գործունէութեան մասին:

Նրա ազատասէր սիրտն այլևս չը հանդուրժեց... Նրա սէրը  
դէպի հայրենի՝ երկիրը, որ երբէք սահման չէ ունեցել, մղեց  
նրան դէպի հտալիա...

Այդ օրւանից ժագեց նրա աստղը, որ այնուհետև մնաց փայ-  
լուն ու վառ...

Երբ Գարիբալդին իր նաւով, որի վրայ հպարտ ծածանւում  
էր եռագոյն դրոշը, հասաւ իտալիա, արդէն ապստամբութիւնը  
բռնել էր ամբողջ երկիրը...

## II.

1848 թ. մարտի 27-ին Գարիբալդին ճանապարհուեց Ամերի-  
կայից դէպի իտալիա:

Այդ միջոցին յեղափոխական շարժումները բռնկւել էին ար-  
դէն ամբողջ Եւրոպայում: Ֆրանսիայում պայմել էր փետրարեան  
յեղափոխութիւնը. Օրլէանների տոհմը արտաքսւած էր. հաստատ-  
ւել էին նոր հանրապետական կարգեր:

Իտալիան ևս յետ չէր մնացել միւս երկրներից, քաղաքա-  
կան շարժումները բռնել էին ամբողջ իտալիան հիւսիսից մինչև  
հարաւ: Սիկիլիայում ապստամբութիւնը եռում էր. Ֆէրգինանդ  
թագաւորը ստիպւած էր տալու նոր սահմանադրութիւն: Սարդի-  
նիայի թագաւոր Կարլ Ալբէրտը, տեղի տալով ժողովրդի պահանջ-  
ներին, հրատարակել էր նոր կանոններ, որոնք հաստատում էին  
նոր սահմանադրական կարգեր: Նոյնը տեղի էր ունեցել Տօսկա-  
նիայի ու Պարմայի գրասութիւններում: Հոօմում պապը ևս հար-  
կագրւած էր մի քանի զիջումներ անելու ժողովրդին: Աւստրի-  
այի իշխանութեան տակ գտնաւած իտալական նահանգներում Լօմ-  
բարդիայում, Վենետիկի շիջանում, Մօդէնայում ապստամբական  
շարժումները հասել էին իրենց զարգացման գագաթնակէտին...  
Այսպէս, ամբողջ իտալիան գառւած էր յեղափոխական կրակով...

Գարիբալդին, չը նայեած, որ գեռ 1833 թ. սկսած գտնուում  
էր քաղաքական յանցաւորների թւում, այնուամենայիւ, առանց  
մի փայրկեան անգամ վարանելու, թողեց իր ընտանիքը հայրենի  
Նիցցա քաղաքում ու գնաց ուղղակի Սարդինիայի թագաւորի

մօտ առաջարկելու իր ծառալութիւնները: Կարլ Ալբէրտը այդ  
միջոցին անցել էր ապստամբ լօմբարդացիների գլուխը և պատե-  
րազմ էր յայտարարել՝ աւստրիացիներին:

Դժբախոտարար թագաւորը սառն ընդունելութիւն ցոյց տւեց  
Գարիբալդին և մերժեց նրա առաջարկը:

Գարիբալդիի հայրենասէր սիրուը խիստ վշտացաւ, սակայն  
նա նրանցից չէր, որոնք վհատութեմ են առաջին անյաջողութիւնից...

Նա շտապեց Միլան: Այստեղ ժամանակաւոր կառավարու-  
թիւնն ուրախութեամբ ջրնդունեց նրան. տալով գեներալի տիտղոս,  
յանձնեց նրան կազմակերպելու լօմբարդացի կամաւորներին:

Գարիբալդին մեծ փութկոտութեամբ կազմակերպեց իր գուն-  
դը. նա արդէն պատրաստ էր կռւի դաշտը նետւելու, երբ Կարլ  
Ալբէրտը, մի շաբք պարտութիւններ կրելով աւստրիացիներից,  
ստիպւած եղաւ նորից Միլանը յանձնել թշնամուն ու հաշտութիւն-  
կապել:

Գարիբալդին զայրացած յայտարարեց մի թռուցիկ, որտեղ,  
անտանելով թագաւորին «հայրենիքի դաւաճան», խոստանում էր  
շարունակել պարտիզանական կռւիւ:

Այնուամենայնիւ կռւիւ տանուլ էր տւած. Գարիբալդիին  
այլևս Լօմբարդիայում ոչինչ չունէր տնելու: Նա հեռացաւ Ռուէն-  
նա ու սկսեց կազմել կամաւորների նոր խմբեր:

Այդ միջոցին հոօմում պայմեց ապստամբութիւն:

Պապ Պիոս IX, որ արդէն գաւաճանիլ էր իր նախկին գա-  
ղաքարներին ու կորցրել իր ժողովրդականութիւնը, անկարող  
լինելով գիմագրել հանրապետականներին, փախել էր Հոօմից:  
Ապստամբները Մաձինիի դեկավարութեամբ հաստատել էին Հոօ-  
մում հանրապետութիւն:

Ֆրանսիական կառավարութիւնը, իր հովանաւորութեան  
տակ առնելով պապին, զօրք ուղարկեց Հոօմի վրայ: 1849 թ. ապ-  
րիլի 24-ին ֆրանսիական նաւատորմիղը հասաւ Հոօմից ոչ հեռու  
Զիվիտա-Վէկկիա նաւահանդիսաւը: Այդ ժամանակ Մաձինին հրա-  
ւիրեց Գարիբալդիին օգնութեան:

«Երբ Գարիբալդին, ասում է ոռւս կենսագիր պ. Յօմակիօնը,  
նստած ձիու վրայ, գեղեցիկ զարդարւած իր սպիտակ թիկնոցով,  
հագին լայն կարմիր բաճկոն, մեծ սև գլխարկով, որի տակից ծա-  
ծանուում էին ջայլամի փետուրները, երկար զանգուր մազերով,

որոնք թափւած էին նրա յաղթահնդամ՝ ուսերի վրայ, — երեաց Հոռմի փողոցներում, ժողովուրդը ոգեորւած նրա անվեհեր տեսաբից, համակւեց մի մտքով ու մի յուսով՝ ահա նա, որ կը պաշտապնի քաղաքը, ահա նա, որ կարտաքսէ թշնամունք...

«կեցցէ Գարիբալդի» աղաղակները. ամրոխը օդը ձգելով թաշկի-նակներ ու գլխարկներ՝ ողջոնում էր իր աղատարար հերոսին...

Գարիբալդին յանձնեցին կամաւորների մի զօրագունդ, որ բաղկացած էր ամեն կարգի ու դիրքի մարդկանցից. այստեղ կայթական իտալացիներ, իտալացիներ, սրանք ամենքը անծանոթ էին զինուորական դործին, սակայն Գարիբալդիի հրաշագործ ձեռքի տակ դառնում էին կուտի մէջ մի-մի առիւծներ... Նա զիտէր նրանց մէջ մշտական վառ պահել աղատասիրութեան ու հայրենասիրութեան ոգին, և այդպիսով շրաշրներ գործել...

8,000 հոգուց բաղկացած Գրանսիբական զօրքն անկարող եղաւ գիմադրել Գարիբալդիին. մեծ կորուստ տալով, նա յետ նա- հանջեց, թողնելով կուտի յաղթական դաշտը ժողովրդի հերոսին...

Հոօմը աղատած էր, ժողովուրդը ցնծում էր, սակայն ինքը Գարիբալդին գործը վերջացած չէր համարում. թշնամին յաղթւած էր, սակայն գեռ ոչնչացրւած ու իսպառ արատառած չէր. գեռ վտանգը կար, և նա թոյլատութիւն խնդրեց Մածինիի հանրա- պետական կառավարութիւնից հետամուտ լինել թշնամուն:

Բայց, գժրախտարար, նրա խնդիրը մերժեց, և Հոօմը նո- րից ընկաւ թշնամիների ձեռքը:

Ֆրանսիական զօրքը, օգտելով զինաղաղարից, ժողովեց նոր ուժեր, և գիշերով, «կեցցէ իտալիա» դաւաճանական աղաղակնե- րով ներս խուժեց քաղաք...

Գարիբալդին փորձեց պաշտպանել քաղաքը, սակայն «աղ- պային ժողովը» որոշեց անձնատուր լինել. Այս ժամանակ Գարի- բալդին վճռեց գնալ վեհետիկ, ուր յուզումները գեռ շարունակ- ւում էին. նա, ժողովելով իր զինուորներին, որոնք թւով 2,400 հո- գի հետևակներ էին և 400 հոգի ձիւորներ, ասաց նրանց.

«Զեզ սպասում են տօթն ու ծարաւը ցերեկը, իսկ գիշերները՝ ցուրտն ու քաղցը: Յոզնածութիւնն ու վտանգները կը լինեն ձեզ բա- ժին: Դուք չէք ունենայ ոչ հանգիստ, ոչ աղատառան. ձեզ սպառնում

է ծայրայիկ չքաւորութիւն. գուք իւրաքանչիւր վայրկեան պատ- րաստ պիտի լինիք կուտ մղելու: Արգ, ով սիրում է հտալիքան, թող հետևի ինձ»: Եւ արդարեւ աննկարագրելի դժւարութիւններ ու տանջանքներ նա կրեց ճանապարհին: Աւստրիացիները մի կողմից, Գրանսիբացիները միւս կողմից՝ հետևում էին նրան: Ան- ընդհատ կոիւներում նա կրցրեց իր խմբի մի մասը. միւս մա- սը նա ինքն ալճակեց. մնացին միայն 250 հոգի, որոնք չուզեցին հետանալ սիրած հրամանատարից: Սրանց մէջ տեղաւորելով իր կնոջ Անետային, որ միշտ բոլոր կահներում անբաժան էր ամուս- նուց, Գարիբալդին կատարեց դաժանելի արշաւանքի վերջին. գործողութիւնը: Գիշերը, ձեզը ելով թշնամու բանակը, հասաւ Ալ- բրիատիբական ծովի ափը: Այստեղից նա, նստելով ձինորսական նա- ւաւիներ, դիմեց գիշերով դէպի վեհետիկ: Արդէն մօտեցել էին բաղարին, երբ աւատրիացիները, նկատելով, մի քանի անգամ թնդանութեան ու ապա սկսեցին հետամոււտ լինել: Օգտելով գիշերւայ մթութիւնից, նաւակներից մի քանիսը ավատ- ւեցին, միւսներն ընկան թշնամու ձեռքը... Գարիբալդիին յաջող- ւեց Անետայի հետ միասին ափն իջնել ու թագնւել մօտակայ անտառում:

Այստեղ Գարիբալդիին հասաւ անձնական մեծ դժբախտու- թիւն: Վերջին օրերի նեղութիւնները վերջնականապէս ջատել էին Անետայի թոյլ ոյժերը: Երկու օր շարունակ Գարիբալդին իր ձեռների վրայ տանում էր մերժման Անետային, ջանալով մի ան- վտանգ տեղ գտնել և բժշկի օգնութեան դիմել: Սակայն իզուր: Անետան շուտով վախճանւեց, թողնելով Գարիբալդիին երկու տղայ՝ Մէնօտափի ու Միչօտո, և մի աղջիկ՝ Տէրեզիտա:

Գարիբալդիին, յանձնելով հոգին իր սիրելի Անետային ան- տառում, ուղերւեց դէպի Պիեմոնտ:

Այստեղ հալածական հերոսը հանդիպեց նոր դժբախտութեան: Կաստվարութիւնը նրան ձերբակալեց ու բանտարկեց... Սակայն պարլամենտն ու հասարակութիւնը բարձրացրին բուռն բողոքներ այդ տեսակ անսարդ բայլի դէմ, և ամօթահար եղած կառավա- րութիւնը յետ վերցրեց իր կարգագրութիւնը...

Գարիբալդիին, տեսնելով, որ թշնամիներն իշխում են ամե- նուրեր, որ ժողովուրդը կրկնի լրւած է, որ աղատագրական շար- ժումը մատնւած է ժամանակաւոր դաւարի, որ, վերջապէս, իր

ներկայութիւնն իտալիայում մշտական սպառնում է առաջ բերերել բարգութիւններ աւասրիացիների ու իտալական կառավարութիւնների միջև,—որոշեց զրկին հեռանալ հայրենիքից...

Մի քանի տարի Աֆրիկայում ու Ամերիկայում թափառելոց յետոյ, Գարիբալդին վերադարձաւ կրկին Եւրոպա, գնեց իր վաստակած փողով Նէապոլից ոչ հեռու կապրերա վայրենի, բայց գեղեցիկ կզու մի մասը և այնտեղ բնակութիւն հաստատեց:

Այստեղից դիւրին էր հետեւ հայրենիքում տեղի ունեցող անցքերին:

Սակայն նրան վիճակած չէր երկար հանգիստ առնելու. վրայ հասան 1859 թ. փոթորկալից օրերն և վերջ դրին նրա խաղաղ կինցաղին...

### III.

«1848 թ. յեղափոխութիւնը, ասում է ֆրանսիացի պատմաբան Սենիօրօսը, յաջողութիւն չւնեցաւ: Նրանից յետոյ մնացին սոսկյիշողութիւններ ու հիասթափութիւն. ժողովուրդը անտեսապէս քայլայւեց, կառավարութիւնները սկսեցին առաւել ևս անվատահութեամբ վերաբերւել դէպի մամուլը, ազատամիտ գաղափարներն ու բուրժուազիան. նրանը կրեցին մեծ դէփիցիտ, իսկ ամբողջ միջին իտալիան մնաց օտարների ձեռքին (աւտորիացիները գրւել էին դքսութիւններն և Ռումանիան, իսկ ֆրանսիացիները՝ Հունը): Եղացին եւսագոյն դրօշը, որ միաժամանակ ընդունւած էր բոլոր կառավարութիւններից, այժմ թողնւած էր: Իտալիան մնաց նոյն բաժան-բաժան եղած ու օտարների իշխանութեան ենթակայ պետութիւնը, ինչպէս որ էր 1848 թւականից առաջ»:

Միայն մի պետութիւն կար, որ կարողացել էր պահպանել իր պագային անկախութիւնն ու ազատ սահմանադրական կարգերը. դա Սարդինիայի թագաւորութիւնն էր, որ ընդգրկում էր իր մէջ Սարդինիան, Սաւոյիան, Պիեմոնտը ու Ֆինուան:

Այս իշխանութիւնն էլ զարձաւ կենարօն իտալական միութիւնը գարբնողների համար:

Այստեղ էին իրենց համար ապաստան գտել իտալական աշպատգրութեան բրլոր հալածական գործիչները:

Այստեղ էր և հոչակաւոր կոմս Կաւուրը, Սարդինիայի մինիստրութեան նախագահնը, որ մեծ դեր կատարեց իտալական ազատագրութեան ներկայ շրջանում:

Կաւուրի մինիստրութիւնը տեսց 1852 թ. սկսած մինչև 1859 թ., և նա այդ ժամանակայ ընթացքում մնդուլ կերպով աշխատում էր իրագործելու իտալական միութիւնը:

Նրա ծրագիրն էր՝ ստեղծել հիւսիսային իտալիայի նահանգներից անկախ ու զօրեղ իտալական պետութիւն ու ապա միացնել սրա հետ մէկը միւսի յետելից իտալիայի մնացեալ մասերը: Այս նպատակին համեմու համար կաւուրը անհրաժեշտ էր համարում նախ, ստեղծել զօրեղ զօրը ու նաւատորմիզ, իսկ երկրորդ՝ ձեռք բերել գաշնակիցներ Եւրօպայում: Կաւուրը համոզւած էր, որ իտալիան միայն իր սեփական ոյժերով անկարող կը լինի ազատել աւասրիացիների նման ուժեղ թշնամու լինի տակից:

Եւ կաւուրին յաջողւեց իրագործելու այս ծրագիրը համարեա ամբողջութեամբ:

Օրէնսդրական նանապահնով նա մեծ գարկ տւեց Սարդինիայի թագաւորութեան ընդհանուր տնտեսական գրութեան զարգացման, իսկ ձարպիկ քաղաքականութեամբ նա ձեռք բերեց Սնուզիայի ու Ֆրանսիայի բարեկամութիւնը: 1859 թ. յունարին կաւուրը պաշտօնապէս Պլումբիերում գաշն կապեց նապոլէոն III-ի յետ ընդդէմ Աւստրիայի:

Այդ գաշնագրութեան համաձայն նապոլէոն III-ը պիտի ազատէր Լօմբարդիայի ու Վենետիկի իշխանութիւնները, իսկ Փոխարքէնը ստանար Նիցցան, Գարիբալդիի ծննդավայրն, ու Սաւոյիան:

Երեք ամիս անց պատերազմը, իսկապէս, բռնկւեց: Կաւուրը անմիջապէս սուսանարկեց Գարիբալդիին ստանձնել կամաւորների այսպէս կոչւած «Ալպեան որսորդների» զօրագնդի հրամանատարութիւնը:

Գարիբալդին, զոհ իրենց ցոյց տւած պատեից, թողեց գեղատեսիլ կապրերան ու շտապեց կուի զաշտը:

Այստեղից նա, կաւուրի գաղանի թելազրութեամբ, ուղարկեց իտալիայի չորս կողմը յատուկ պատերազմներ առաջ բերելու ընդհանուր ապստամբութիւն:

Ինչպէս միշտ, այս անգամ էլ Գարիբալդին յաղթութիւնը յաղթութեան յետեկից էր տանում աւասրիացիների դէմ:

Նա արդէն մտածում էր նւաճելու վեճետիկը, հասնել մինչև Ադրբիատիքական ծովի ափը, երբ հրաման ստացաւ Նապօլէօն III-ից դադարեցնել պատերազմական գործողութիւնները: Պրուս սացիներն արդէն սպառնում էին Ֆրանսիային, և կայսրը շտապեց հաշտութիւն կապել Աւստրիայի հետ:

Գարիբալդին զայրացած պատուց կայսրի նամակը և կտորները յէտ ուղարկեց նրան պատուխանի փոխարքէն: Բայց անմիապէս նա ստացաւ երկրորդ հրամանը նոյն մտքով և այս անգամ արդէն Սարդինիայի թագաւոր Վիկոր-Էմմանուէլից, որին հերոցեալ մեծ ակնածութեամբ էր վերաբերում, իրու ապագայ միաւ իտալիայի միապետի:

Եւ Գարիբալդին ստիպւած եղաւ հնագանգւել...

Բայց, երբ նա լուր առաւ, որ Աւստրիան զիջել է՝ միայն Լօմբարդիան, իսկ Ֆրանսիան ստացել է իր ցոյց տւած աջակցութեան համար Նիցցան, իր ծննդավայրն, և Սաւոյիան, նա չը կառողացաւ այլ հո զապել իր զայրոյթն ու վիշտը...

Մինչդեռ նա իր ամբողջ կեանքը նւիրել էր իտալիայի պատութեան գործին, նրա հայրենի քաղաքը տալիս են օտարներ անգուսպ բռնութեան արդիւնք, ծայրայիշ անարդում էր և նա ամենից շատ մեղադրում էր կառուրին:

Ըստրւելով պատկանաւոր իր հայրենի Նիցցայի կողմից, նա սերկարացաւ Տուրինի պալատին և թափից իր վշտացած, վիրա-

Այնուամենայնիւ Նիցցան մնաց ֆրանսիացիների ձեռքին... Գարիբալդին, հիսաթափւած ու դառնացած, հեռացաւ լր ժայռութիւնը:

#### IV.

1859 թ. պատերազմը թէկ դե յու չը ձևակերպեց իտալիայի պատաքական միութիւնը, բայց դե ֆակտո իրագործեց այդ միութիւնը:

Պատերազմի սկզբուն Գարիբալդիի արած կոչը դէպի ընդհանայում, Ռումանիայում, Տուրքիայում ու Պարմայի դըքին...

ոութիւններում ժողովուրդը ապստամբւել էր ու հաստատել ժամանակաւոր կառավարութիւններ, որոնք ընդունել էին Սարդինիայի սահմանադրութիւնը, ոչնչացրել նրա սահմանների մաքսատներն ու հիմնել ընդհանուր պօստային հաղորդակցութիւն: Իսկ երբ Սարդինիայի պարլամենտի նոր ընտրութիւնները կայացան, այդ գաւառները ուղարկեցին իրենց յատուկ ներկայացուցիչները. այդ օրւանից Սարդինիայի պարլամենտը կոչւում էր աղջային պարլամենտ:

Այսպէս կազմակերպւեց հիւսիսային իտալիան, մնում էին գեռ անջատւած գէնետիկը, Հոումը, Նէապոլն և Սիկիլիան:

Սակայն ի՞նչ փոյթ. գեռ կէնդանի էր Գարիբալդին: Նրա ապատասէր ոգին սաւառնում էր իտալիայի հօրիզօններում, ամենապատասէր գէին սաւառնում էր իտալիայի դէմ' յանուն հանքին գրգում գէպի անդուլ էռիւ արսօլիւտիզմի դէմ' յանուն հայլենիրի բապետութեան, օտարների անարդ լծի դէմ' յանուն հայլենիրի ապատութեան...

Ազատութեան արշալոյսն ամենից առաջ ծագեց Սիկիլիայի ու ապա Նէապոլի համրա:

1860 թ. Գարիբալդին, միացած հանրապետականների պարագութիւն Մաձինիի հետ, սկսեց Սիկիլիայի ու Նէապոլի ապատամբութիւն պատրաստութիւնները անունել: Ամեն կողմից կամաւորներեան պատրաստութիւնները անունել: Ակսենտին խմբել ագային հերոսի շուրջը. շուտով նրանց թիւը ըստ սկսեցին խմբել ագային հերոսի շուրջը. թէկ յետագայում Գարիբալդիի ձեռքի տակ հասաւ հազար հոգու. թէկ յետագայում Գարիբալդիի ձեռքի տակ հենարօնացաւ մօտ 17 հազար հոգուց բաղկացած զօրք, այսուհենարօնացաւ գորքը ամեն տեղ ջարդւած ու արտաքսւած էր:

«Գարիբալդիի փառաւոր յաղթութիւնները, ասում է պլ. Մայիսի կիսին Գարիբալդին հազար հոգով իջաւ Սիկիլիայի ափին ու յայտարարեց իբեն կղզու զիկտատոր: Վեց շաբաթւայ ամին ու յայտարարեց իբեն կղզու զիկտատոր: Սիկիլիան արդէն նւաճւած էր. Նէապոլիստաց մթացը ամեն տեղ ջարդւած ու արտաքսւած էր:

«Գարիբալդիի փառաւոր յաղթութիւնները, առաջ ըերին ընդհանուր համակրանք նաև հեծուակիոնը, առաջ ըերին ընդհանուր հայրանց, օգնութեան գալով թէ փողով, թէ մարդագանը տւին նրանց, օգնութեան գալով թէ փողով, թէ մարդագանը տւին նրանց, օգնութեան գալով թէ փողով, գալիս մտնում էին րին և, առաջ ըերին հսարաւորութիւնից օգտւելով, գալիս մտնում էին

Գարիբալդիի գրոշի տակ. նրանք հրաժարւում էին արդիւնաւէտ պաշտօններից և գալիս էին մեռնելու իտալացի հայրենասէրների հետ միասին»:

Իսկ հոչակաւոր Վիկտոր Հիւգօն Գարիբալդիի տարած յաղթութիւնների տպաւորութեան տուկ այսպէս էր խօսում.

«Ո՞վ է Գարիբալդին:—Մարդ է, և ուրիշ ոչինչ. բայց նա մարդ է բառիս ամենաբարձր մտքով: Ազատութեան մարդ, մարդարդութեան մարդ: Ունի նա զօրք:—Ո՞չ. միայն բուռն կամաւորներ: Ունի նա ուազմամթերք:—Ո՞չ: Իսկ վասնո՞ւ:—Միայն մի քանի տակառ: Թնդանօթներ:—Այնքան, որքան խլւած են թշնամուց: Ինչումն է նրա ոյժը: Ինչն է պատճառը նրա յաղթութիւնների: Ո՞վ է նրա նիզակակիցը:—Ժողովուրդների հոգին»:

Յուլիսի վերջերին Սիկիլիան արդէն ազատած էր նէապօլիտանական բանակալից: Գարիբալդին շտապում էր անցնել Նէապօլ, իսկ այնտեղից Հոօմ:

Այդ միջոցին եւրօպական դիպլոմատիան, որ միշտ ձգտում էր պահել Իտալիան քաղաքականապէս քայլայւած զրութեան մէջ, պահանջեց Սարդինիայի կառավարութիւնից վերջ դնել Գարիբալդիի գործողութիւններին: Վիկտոր Էմմանուէլը դիմեց մի նամակով Գարիբալդին, թախտնձելով բաւականանալ տարած յաղթութիւններով:

Ժողովրդի հերոսը այդ նամակին պատասխանեց իր յեղափոխական մեծ անւան արժանի հետևեալ խօսքերով:

«Ժողովրդը կանչում է ինձ, և ես պարտազանց կը լինեմ դէպի նա, եթէ արձագանք չը տամ նրա կոչին»:

Եւ արդարե. օգոստոսի 17-ին Գարիբալդին անցաւ Կալաբրիա, վերցրեց Ռէջիո ամրոցն ու ապա յաղթական ընթացքով հասաւ Նէապօլ: Այստեղ ազգաբնակութիւնն ընդունեց ազգային հերոսին բուռն ոգեսորութեամբ: Անընդհատ տեղի էին ունենում աղմկալից հանդէսներ, հրավառութիւններ, կօնցերտներ ուղղակի փողոցներում...

Գարիբալդին անսմիջապէս մտցրեց Սարդինիայի սահմանադրութիւնը՝ ազատեց քաղաքակական բանտարկեալներին, գրաւեց յարքունիս բուրքօնների տոհմական կալւածները, արտաքսեց եղիտական կազմակերպութիւնները:

Այս սկզբնական կարգավրութիւններից յետոյ Գարիբալդին համարեց իր գործը վերջացած Նէապօլում:

Նոյեմբերի սկզբներում նա, իրուն գիկտատոր, համաձայն ազգաբնակութեան յայտնած ցանկութեան, յանձնեց Սիկիլիան ու Նէապօլիտանական նախկին թագաւորութիւնը Վիկտոր-Էմմանուէլին, իսկ ինը նորից հեռացաւ Կապըրեա:

Թագաւորը տւեց Գարիբալդին մարշալի կոչում, առաջարկեց ապրել իր պալատներից մէկում, վերցնել հարուստ պիտական կալւածներ, սակայն Գարիբալդին կտրուկ կերպով հրաժարւեց բոլոր պատիւներից: Նա իրաւունք չէր համարում վարձատրութիւն ստանալ հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար:

«Այն հերոսը, ասում է Յօմակիօնը, որ նւաճեց իր միապետի համար նրա կէս թագաւորութիւնը, վերագրածաւ տուն մի քսակ լորի զուան տակին»...

#### V.

1861 թ. մարտին ժողովւեց առաջին իտալական պարլամենտը (ազգային ժողովը), որ և հոչակեց Վիկտոր-Էմմանուէլին Իտալիայի թագաւոր «Աստուծոյ ողորմութեամբ և ժողովրդի կամքով»... Այժմ Վիկտոր Էմմանուէլն ունէր 22 միլիոն հպատակներ...

Այնուամենայնիւ Իտալիայի քաղաքական միութիւնը գեռ լիակատար չէր. անհրաժեշտ էր միացնել Հոօմին ու Վենետիկը:

Հոօմի հարցը ամենից շատ էր զբաղեցնում թէ Գարիբալդիին ու ժողովրդին և թէ կառավարութեան:

«Հաօմը պիտի լինի Իտալիայի մայրաքաղաքը. առանց մայրաքաղ-Հոօմի՝ անհնարին է վերջնականապէս վերաստեղծել Իտալիան», —ասում էր Կառուրը պարլամենտում, և այդ կարծիքը բաժնում էր ամբողջ Իտալիան:

Զընայած դրան կառավարութիւնը, Եւրօպայի հնչման տակ, խուսափում էր վճռողական քայլերից:

Գարիբալդին էր միայն, որ տարւած Հոօմի գրաւման մըտքով, չը կարողացաւ երկար սպասել...

1862 թ. նա իր կամաւորներով անցաւ Սիկիլիա: Այստեղ նա սկսեց կազմակերպել իր զօրքը, բայց միաժամանակ նաև զօ-

բեղ ազիտացիա մղել ժողովրդի մէջ ֆրանսիացիների դէմ, որոնց ձեռքին էր գտնւում Հոօմը: Այս անգամ Գարիբալդին կուի նշանաբան էր ընդունել՝ «Հոօմ կամ մահ...»

Երբ 3500 հոգի կամաւորներ արդէն պատրաստ էին, Գարիբալդին ուղևորւեց Կալաբրիայի միջով գէպի Հոօմ:

Անցնելով մի շարք քաղաքներ, Գարիբալդին արդէն հասել էր Ասպրոմոնտէ լեռան ստորոտը (Հոօմից ոչ հետու), երբ հանգիպեց իտալական կառավարութեան զօրքին...

Վիկտոր-Էմմանուէլը, Նապոլէօն կայսեր ճնշման տակ, ուղարկել էր իր զօրքը ազգային հերոսի գէմ...

Դա ճակատագրի գառն հեգնանքն էր...

Կառավարչական զօրքը արդէն պատրաստ էր կոիւը սկսելու: Գարիբալդին, սակայն, չէր ուզում թափել իր հայրենակիցների արիւնը. նրա կոիւը ֆրանսիացիների դէմ էր: Եւ ահանա շտապից իր զօրքի առաջ հրաման արձակելու ըլ կրակել: Սակայն հէնց այդ վայրկեանին կառավարչական զօրքն իր փորբուդի հրամանատարի կարգադրութեամբ համապարկ տեց Գարիբալդիի վրայ...

Հերոսը վիրաւոր ընկաւ, իսկ նրա զինւորներն անձնատուր եղան...

Գարիբալդին ձերբակալեցին և տարան Վարինիանո ամրոցը: Երբ նրա վէրքերն առողջացան, —թէ ենա մի ոտի վրայ մնաց կազ մինչև մահ, —կառավարութիւնը ազատ թողեց նրան: Գարիբալդին վերագրածաւ տուն, կապրիք կղզին:

Այսպէս անյաջող վերջացաւ Հոօմն ազատելու առաջին փորձը: Աւելի բախտաւոր գտնւեց Վենետիկը:

1865 թ. Իտալիան դաշն կապեց Պրունսիայի հետ ընդէմ Աւստրիայի, իսկ 1866 թ. սկսեցին պատերազմական զործողութիւնները:

Իտալական կառավարութիւնը նորից յիշեց ժողովրդի անվեհեր հերոսին. նա անմիջապէս հրաւիրեց Գարիբալդին ստանձնելու կամաւորների զօրքազնդի հրամանատարի պաշտօնը:

Մեծ հայրենասուէր մոռացութեան տեց կառավարութեան կողմից իրեն հասցրած վիրաւորանքը, և ոգևորութեամբ նետւեց կուի ահեղ դաշտը:

Նրա երջանիկ աստղն այստեղ ևս փայլեց...

Մինչդեռ իտալական զօրքի բոլոր միւս հրամանատարներն

ամեն տեղ յիտ էին նահանջում թշնամու առաջ, Գարիբալդին մի քանի յաջող կոիւներից յետոյ յիտ մղեց աւստրիացիներին ու գրաւեց ամրող իտալական Տիրոլը:

Բայց հերոսին սպասում էր նոր հիասթափութիւն, նոր դասն վիշտ... Նրա երազները՝ խլել իսպան Տիրոլը թշնամուց, օդը ցնդեցին:

Թագաւորն արդէն հաշտութիւն էր կապել Աւստրիայի հետ միայն Վենետիկը ստանալու պայմանով...

Երբ Գարիբալդին հեռավրով հրաման ստացաւ հեռանալ Տիրոլից, սաստիկ զայրացաւ, կատաղութիւնից նա կոտրեց իր սուրն և պատասխանեց միայն մի խօսքով՝ «Հնագանդում եմ»...

Վենետիկի ազատութիւնից յետոյ Հոօմի հարցը դառաւ հերթ թական:

Կառավարութիւնն ու գարիբալդիանները այդ ինդրի լուծման մէջ հետևում էին իրար հակառակ քաղաքականութեան:

Մինչդեռ առաջինը ձգտում էր խաղաղ ձանապարհով տիրել Հոօմին, և այդ նպատակով մշտական բանակցութիւններ էր վարում պատի ու Նապոլէօն կայսեր հետ, Գարիբալդին և նրա համախոներն աշխատում էին յեղափոխական ճանապարհով նւագ ձելու Հոօմը:

Եւ Գարիբալդին, հաւաքարիմ իր մի անգամ արդէն ընդունած նշանաբանին՝ «Հոօմ կամ մահ», չէր զագարում նոր փորձեր անելուց հասնելու իր փայտայն նպատակին:

Բայց, ինչպէս միշտ, յեղափոխական ճանապարհը վիշտ է, նու ամեն անդամ էլ հանդիպում էր անյաջողութեան, իտալական կառավարութիւնը միշտ արգելը էր հանդիսանում հերոսի ազատարար ջանքերին: Վերջին փորձը նա կատարեց 1867 թ. հոկտեմբերին: Գարիբալդին իր կամաւորներով ներս խուժեց Հոօմի նահանգը ու գրաւեց Մօնտէ Ռուոնդո աւանը, որ Հոօմից ընդամենը 7 վերսա հեռաւորութեան վրայ էր գտնւում: Դժբախտաբար ընդհանուր ազատաբութիւնը, որի վրայ մեծ յոյսեր էին գրել գարիբալդիականները, չը յաջողւեց. քաղաքում տեղի էին ունենում միայն մի քանի մասնակի ապատամբական դէպեր:

Նապոլէօն III-ը, լուր առնելով Գարիբալդիի արշաւանքի մասին, անմիջապէս զօրք ուղարկեց պաշտպանելու Հոօմը:

Իտալական կառավարարութիւնն էլ իր կողմից ջանում էր համոզելու Գարիբալդիին հրաժարւել արշաւանքից:



Եւ արդարեւ. Գարիբալդին, տեսնելով, որ ընդհանուր ապատամբութիւնը վիճել է, իսկ քաղաքն արդէն ֆրանսիական զօրքի ձեռքին է, տեղի տևեց կառավարութեան յորդորներին: Նա յետ նահանջեց, բայց ճանապարհին պատի զօրքը յարձակւեց նրա վրայ: Տեղի ունեցաւ Մէնտանի հոչակաւոր կոփւը (1867 թ. նոյեմբերի 3-ին). Գարիբալդին ջարգեց պատի զօրքը, բայց այդ միջոցին օգնութեան հասաւ ֆրանսիական զօրքը, որ զինւած էր Շասպօի նոր հրացաններով: Կոփւը տեսեց միայն երկու ժամ:

Գարիբալդիականները, պարտութիւն կրելով, փախուստ տվին, իսկ ինքը Գարիբալդին հազիւ կարողացաւ ազաւել: Ֆրանսիական զօրքի հրամանատարը, գիւային հրձւանքով լցւած տարածյալթութիւնից, հեռագրեց կայսեր՝ «Շասպօի հրացանները հրաշըները գործեցին»...

Գարիբալդին ուղերձեց գէպի կազմերա, բայց ճանապարհին, Ֆլորէնցիայից ոչ հեռու, նրան հասաւ նոր գժբախտութիւն. իտալական ոստիկանութիւնը ձերբակալեց նրան...

Գարիբալդին չէր հաւատում, որ նրա հետ այդքան տմարդի կերպով վարւում են կառավարութեան հրամանով, ուստի և խիստ բողոքեց ու հակառակեց ոստիկանութեան: Սակայն վերջինս անդրդւելի էր. ազգային հերոսին գետին գլորեցին և ձեռքերի վրայ տարան երկաթուղի նստեցրին...

Ոստիկանութիւնը, թէև իսկաւ միջոցներ էր ձեռք տոել գաղանի պահելու հերոսի ձերբակալութիւնը, սակայն լուրն այդ մասին կայծակի արագութեամբ տարածւեց ամեն տեղ...

Երբ գնացքը հասաւ. Սպէցիա քաղաքը, հասարակութեան խուռն բազմութիւնն արդէն պաշարել էր կայարանը:

Ամբոխն արձակեց Գարիբալդիի համար բերած կառքի ձիերը և մարդիկ լծւեցին: «Կեցցէ Գարիբալդի!» անընդհատ աղաղակներով ողերուած ժողովուրդը տարաւ իր ազատարարին բանտի փոխարէն քաղաքի առաջնակարգ հիւրանոցը...

Այսուամենայնիւ վարչութեան յաջողւեց տանել նրան Վարինիանո ամրոցը:

Գարիբալդիի հմայքը ժողովրդի առաջ չափազանց մեծ էր, որպէս զի ամբողջ միջնադէպը դրանով էլ սահմանափակւէր: Իւտալիայի շատ տեղերում սկսւեցին մի շարք խոշոր յուղումներ ու ցոյցեր կառավարութեան գէմ:

Միլան քաղաքը ուղղակի ապատամբւեց. կառավարութիւնը, ապատամբներին զսպելու համար դիմեց զէնքի ոյժի, սակայն ժողովուրդը տեղի տևեց միայն արիւնահեղ կռւից յետոյ... Նոյն իսկ Պարիզում հասարակութիւնը խիստ բողոքեց կառավարութեան այգչափ անարգ ու անարժան վարմունքի դէմ:

1867 թ. նոյեմբերի 25-ին կառավարութիւնը, տեղի տալով ժողովրդի բողոքներին, արձակեց Գարիբալդիին: Նա վերադարձաւ կազմերա կզզին և վերսկսեց իր տնային խաղաղ աշխատնքները:

## VI.

1870 թ. բոնկւեց ֆրանկօ-պրուսսական պատերազմը, որ և վերջ դրեց Գարիբալդիի մենակեաց կեանքին:

Պատերազմի դաշտից գալիս էին մէկը միւսից աւելի յուղիչ լուրեր:

Ֆրանսիացիները տանուլ են տւել Սէդանի կոփւը. Նապօլէօն III կայսը գերւած է, Ֆրանսիայում հաստատւած է հանրապետութիւն, պրուսսացիները սպանում են Գարիզին, հանրապետութիւնը ծայրացել վտանգի մէջ է...

Եւ Գարիբալդիի անոխակալ սիրտը, նրա հանրապետական զգացմունքները, նրա ազատամէր ոգին այլև չը հանդուրժեցին...


Ազատութեան սարտիկը շտապեց կուի դաշտը, օգնութեան ձեռք մեկնելու ֆրանսիացիներին...

Այսուղ ևս ծերունի զօրսպետը ցոյց տւեց իր զինուրական հանձնարը: Մասնակցելով մի շարք կոիւների, նա ամէն անզամ էլ յաղթող հանդիսացաւ պրուսսացիների գէմ:

Յետագայում վիկտօր Հիւզոն ամենայն իրաւամբ նկատեց, որ «Փրանսիական գեներալների մէջ Գարիբալդին սիակն էր, որ պարտութիւն չը կրեց»:

Պատերազմը վերջանալուց յետոյ Գարիբալդին վերադարձաւ հայրենիք: Այսուղ նրան սպասում էր մեծ բերկութիւն. նրա փայտայած ամենամեծ իղձը իրագործւած էր... Հոօմը ազատւած էր...

Վիկտօր Հիմմանուէլը, օգտւելով ֆրանս-պրուսսական պատերազմից, գրաւել էր Հոօմը:



Այժմ իտալիայի ազատագրութեան գործը վերջացած էր...  
իտալիան ունէր իր մայրաքաղաքը, իր միակ քաղաքական պե-  
տը, պապի աշխարհական իշխանութեանն վերջ էր տրւած...

1874 թ. Գարիբալդին ընտրեց ազգային պարլամենտի  
պատգամաւոր: Երբ նա մուտք գործեց Հռոմ, ժողովուրդը ընդու-  
նեց հայրենիքի ազատութեան հերոսին բուռն սպառութեամբ:

«Մանիքիստացիաները, ասում է պ. Յօնակիօնը, այնպիսի  
խոշոր չափեր ստացան որ Վիկտոր-Էմանուէլը, զգալով իրեն  
նսեսացած, գանութեամբ նկատեց. «անընդհատ ազադակում են  
Գարիբալդի, իսկ ես ինչով եմ մեղաւոր հոօմայիցիների առաջ...»

\* \*

1882 թ. յունիսի 2-ին մի տիսուր գոյժ կայծակի արագու-  
թեամբ անցաւ ամբողջ իտալիան ծայրէ և ծայր... «Գարիբալդին;  
իտալիայի ազատագրութեան հերոսը, վախճանւել է»...

Ամբողջ երկիրը ընկղմեց սպի ու ողբի մէջ, մեծ կորուստի  
գան վիշտը համակեց ամենքին...

Երախտագէտ հայրենիքը նորից յայտնեց իր յարգանքն ազ-  
գային հերոսին, կատարելով հանդիսաւոր թաղումն ու նիւթա-  
պէն ապահովելով նրա ընտանիքը...

\* \*

Այսպէս մենք տեսնում ենք, որ Գարիբալդիի ամբողջ կեանքը՝  
իտալիայի ազատագրութեան դրամայի մարմնացումն էր: Նա ծըն-  
ւել ու մնաւել էր հայրենիքի ազատութեան վեհ գաղափարով և մե-  
ռաւ, երբ այդ գաղափարը իրանով արդէն իրականութիւն էր դա-  
ռել... Նա միտամանակ միացնում էր իր մէջ անսահման սէր  
դէմպի հայրենիք՝ երկաթէ կամքի հետ, անձնազոհ սիրո՛ հան-  
դարեղ մարի հետ... Պատմութեան մէջ Գարիբալդիի նման գէմ-  
քերը խիստ հազւագիւտ են: Ի գուրք չէ, որ ժողովուրդը մինչեւ  
այսօր էլ պատել է նրա անունը հրաշագեղ առասպեկներով...

«Գարիբալդին, ասում է ժողովուրդը, չէ մեսել. նա նորից  
կը գայ, երբ իտալիային կը հասնի մի մեծ դժբախտութիւն... նա  
կը գայ սպիտակ ծիռով վրայ նստած, երկար գանգուրներն ունի-  
րին թափած, կարմիր թիկնոցով...»



ՀՀ Ազգային գրադարան



NL0411088

1. Բախ.—Հարուստ, և պղքատ.  
II առ պղքաթիւն . . . . . 15 կող.
2. Պետքիսօնիւն.—Հաց, լոյս և տ-  
ղոսութիւն . . . . . 12 »
3. Ֆէգորօվիլիք.—Խնչպէս հն ժո-  
ղով, փողերը ծախու . . . . . 5 »
4. Ասութելիւլ.—Նոր լեր, քար, 2 »
5. Չերեօվ.—Գիւղ, և բանորը 15 »
6. Երեւեօսօնիւն.—Ազգ, հարցը  
և ոօց, զեմօնիքատիսն . . . . . 5 »
7. Քամազովիլիք.—Գիւղացիներ, 5 »
8. Ա. Խոփիսեան.—Արևատու, մի-  
ոթիւններ . . . . . 15 »
9. Խօֆօօօմնիւն.—Խնչ է իրատա-  
կան պետութիւնը . . . . . 15 »
10. Ա. Կարանվ.—Հոգ, հարցը  
և որ շիրանդիմաւում . . . . . 2 »
11. Ժան Ժուէս.—Բուրժ, սեփ, և  
նրա ապազայ զրաւումը . . . . . 5 »
12. Ա. Օքեփենին.—Գեմօն, ընտ, 12 »
13. Խոսու ցիիք.—Ազգութէհնարի  
հարցը Խոսաստանում . . . . . 3 »
14. Ա. Անտրեննեան (Արդիր) —  
Ազատութեան ճանապար. 80 »
15. Ֆ. Լուսոլ.—Սահ է ութ, մաս. 5 »
16. Ա. Ն. Խնչպէս կարեկի է լու-  
ծել հոգաւին հարցը . . . . . 12 »
17. Վ. Գորութիւն.—Խոզ է մող. 2 »
18. Ա. Զալարեան.—Վիճակապր  
տեղ, դիւղ աղջարնակ. 25 »
19. Ալման Գիւնան—Ժողով, օ-  
րէնս, զաշ Զւկուերիայում 20 »
20. Գիւստյեն.—Ու ինչ է ապր. 7 »
21. «Մի զրոյց հողիք, մասին 5 »
22. Լ. Շիշկո—Ազգ-ձր հարցը 7 »
23. Ա. Նիկոլային.—Կօսպերացիս 5 »
24. Շոտար, օգտ, ձեր իրաւունք . . . . . 1 »
25. Լ. Գետօվ.—Երկու ծրագիր 20 »
26. Ա. Գուսիկ.—Պիտ, կազմո-  
կերու, հրմքերը Սրիմուտ. 12 »
27. Աննիլի—Գիւղաց, հարցը  
Քրանսիայում . . . . . 7 »
28. Մ. Յովիննեխսեան.—Դաշն.  
և նրա հակառակորդները 50 »
29. Փ. Գէդ, եւ պ կամար.—  
Տնտես, զարդ, և օօցիալիզմ 5 »
30. Խօֆօօմնիւն.—Ազգ հարցը  
Ա: տօնօմիւն և ֆէղերացիս 7 »
31. Խորամնիկ կարգիր . . . . . 7 »
32. Մ. Յովիննեխսեան.—Գորդ,  
հանգույցը (տաճկահ, խնդիրը  
մերջ ըրջ). . . . . 20 »
33. Հրանանդներ դասան, համար
34. Վ. Ցերեօվ.—Դասակարգա-  
տին կոփ թէօրիատի շարջը 10 »
35. Լ. Շիշկո.—Խոազգույն ծը-  
բադիրը . . . . . 12 »
36. Ա. Ենեկասով.—Խնչ կարգեր  
են հարկուուր ժողովրդին 10 »
37. Ա. Ճախար.—Ֆեղէրալիզմ և  
գէմօնիատիդ . . . . . 30 »
38. Արտամիխ.—Գնասակարը 4 »
39. Արտամիխ.—Մի քանի գլուխ  
հայ-թրքական ընդհար. 25 »
40. Մ. Յովիննեխսեան.—Ապիկ.
41. Վանդր. (Տալ-թրք, ընդհար.) 25 »
42. Ն. Գորգեն.—Խնչպէս իրական.  
ազգութիւն, հասան . . . . . 7 »
43. Գ. Երեօվ.—Պրոլէտար, և  
աշխատաւոր դիւղացիու-  
թիւնը . . . . . 18 »
44. Արտամօվա.—Գիւղացին և  
քանտուրը . . . . . 3 »
45. Ե. Վանդերվելդ—Բանւոր դա-  
սակարգ, դուոթ, բնդզիայում 45 »
46. Ա. Զալի.—Ծող և կասիտ. 15 »
47. Վանի.—Անժատուածները 10 »
48. Մ. Յովիննեխսեան.—Փիլիո-  
փայ Սօցիոլոգ . . . . . 15 »
49. Ֆէօրօվիլիք, ժողովրդ, փողերը  
(բուրժեւէն) . . . . . 7 »
50. Արամայիս.—Մի քանի զլուխ  
հայ-թրքական ընդհարում. 10 »
51. Յ. Մագեստուանի, Ֆրանսիա-  
կան մեծ իւղափոխ. 20 »
52. Յ. Մագեստուանի, Ֆրանսիա-  
կան անցականից թիւն, մօտ.  
անցեալից 1 պրակ. 10 »
53. Գիրունի Յիշողութիւն, մօտ.  
անցեալից 11 պրակ. 15 »
54. Գիրունի Յիշողութիւն, մօտ.  
անցեալից 11 պրակ. 15 »
55. Յ. Թարենսեան, Ազգ, հերոս, 5 »
56. Ա. Արշեև. Տնտեսագիտ.  
զրոյցներ . . . . . 20 »

Դիմել՝ Բազու «Ասրուդիկիին»  
Երևան.—Ա. Օհանջանեանին.

Թիֆլիս Նիկ. Մատինեանին «Փարոս».

Յանկացողները կարող են սահման զրագարանի բոլոր գրքերը  
միասին, չը վճարելով ճանապարհածախուը: